

անուանի արձանագործ մը 1780^{ին} նոյն եկեղեցւոյն մէջ տեղաւորեր էր իր մէկ ճարտարարուեստ քանդակը՝ որ սուրբ Բարսեղաւորացի վերափոխումը կը ներկայացընէր : Եւրոպական ժամանակ երբոր թագաւորաց և սրբոց արձաններուն դէմ պատերազմ հրատարակուեցաւ, Շարթրի սինէօրը միացեր էր՝ երթալ Պրիտանի արձանն ալ խորտակել . բայց մէջերնէն մէկը այնպիսի կորստեան մը վրայ իրաւացի ցաւ զգալով՝ համոզեց զիրենք որ Բարսեղաւորացի անուանուողն նուիրեն այն արձանը : Ուրիշ շատ արձաններ և խորաքանդակ զարդեր ալ կան այս եկեղեցւոյս մէջ, ժԱ, ժԲ և ժԶ դարու շէնքեր :

Եկեղեցւոյն ներքին երկայնութիւնը 396 ոտք է, լայնութիւնը 100 և բարձրութիւնը 106 : Իսկ զանգակաց կրկին աշտարակները՝ կարգէ դուրս զարմանալի շէնքեր են . ժԱ դարուն մէջ շինուածը՝ 342 ոտք երկայնութիւն ունի, իսկ ժԶ դարունը՝ 378 ոտք . հինը՝ նշանաւոր է իր հաստատուն և անտեղի տալի ամրութեամբ . իսկ նորը՝ գեղեցկութեամբ և մեծվայելութեամբ : Եկեղեցւոյն ճակտին շէնքը՝ շատ լաւ յարմարութիւն ունի՝ այս երկու աշտարակներուն հետ . երեք գլխաւոր դռներ ունի, գեղեցիկ և բազմաթիւ արձաններով զարդարուած . և անոնց վրայ մեծ պատուհան մը՝ նկարուած ապակիներով, որուն վրայէն ճամբայ մը կայ որ երկու աշտարակները իրարու հետ կը միացընէ :

1839^{ին} յունիս ամսուն մէջ պատահած հրդեհ մը մեծ փնաս ըրաւ այս եկեղեցւոյն . որուն դարմանը մէկէն ըրին տեղացիք, որպէս զի իրենց քաղքէն այսպիսի զարդ մը չպակսի :

տնտեսական

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Լոնտրա քաղաքը :

Սերջին անգամ եղած աշխարհահամարէն իմացուեցաւ որ Լոնտրա 2,362,286 բնակիչ կար, որոնցմէ 1,106,558 էրիկ մարդ, և անոնցմէ ալ 146,449 հոգի հինգ տարուէն վար : Զամուսնացեալ էրիկ մարդիկ էին 670,380, և չամուսնացեալ կանայք 735,871 . ամուսնացեալ էրիկ մարդիկ էին 399,098, և ամուսնացեալ կանայք՝ 409,731 . այրի էրիկ մարդիկ էին 409,731, և այրի կանայք՝ 110,076 :

Երիկներնէն բաժնուած արք էին 28,598, և էրիկներնէն բաժնուած կանայք 39,231 : Ենցեալ տարի Լոնտրա 86,833 տղաք ծնան, և 56,786 հոգի մեռան :

Ենդհանուր աշխարհահամարը ցըցուց որ ծննդոց յաւելմամբ Լոնտրայի բնակիչները 60,000 հոգի բազմացեր էին 1856^{ին} համեմատութեամբ 1855 տարւոյն . պատճառն է զօրաց ու նաւաստեաց ի հայրենիս դարձը, որոնք պատերազմի պատճառաւ հեռացեր էին, մայրաքաղաքին գործոց աճումն ու բնակութեանց լաւնալը :

Լոնտրա աշխարհքս այնպիսի քաղաք մըն է, ուր մարդուս կեանքն աւելի երկայն է : Տասը տարուան մէջ մեռելոց միջին թիւն ելաւ 25 առ 1000 . անցեալ տարի այս համեմատութիւնս էր 22 առ 1000 : Երեւելոց կէսը 20^{էն} 40 տարուան են, որ իրենց շնչառական գործարանաց ախտակրութիւնը մեռեր են :

Լոնտրան աշխարհիս ամենէն բազմամարդ քաղաքն է . Բէքինէն մէկ քառորդ աւելի բնակիչ ունի, Կոստանդնուպոլսէն երկու անգամ աւելի, Բեղրպոլսէն չորս անգամ աւելի, Սէնայէն, Նոր-Եորքէն ու Սատրիտէն

Հինգ անգամ աւելի, Պեպլինէն եօթն անգամ աւելի, Լմսդերտամէն ութ անգամ աւելի, Հոովմէն ինն անգամ աւելի, Վոփէնհակէն տասներեօթն անգամ աւելի, Սդոքովմէն տասներեօթն անգամ աւելի:

Դնտրա, կ'ըսէ Որատիոս Այ, գաւառ մըն է քաղաքներով ծածկուած: Սակերեւոյթն է 122 քառակուսի մղոն, և 320,391 շինուածք կը բովանդակէ: Լմէն տարի 4,000 տուն կը շինուի 40,000 բնակչաց համար: Տանց շարունակ գիծը Հոլուէյէն ինչուան Վէմ պրուէլ 12 մղոն երկայնութիւն ունի: Իսկ որ Դնտրայի ամէն տները մէկ գծի մը վրայ դրուելու ըլլան, այս գիծն այնչափ երկայն կ'ըլլայ, որ կրնայ թէ Լնգղիա և թէ Վաղղիա պատել, Լորքէն ինչուան Պիրենեան լեռները:

Դնտրայի քարայատակ ճամբաներուն թիւն է 5,006, որոնց բոլորական երկայնութիւնն է 2,000 մղոն. այս քարայատակ ճամբաներուն ծախքն եղեր է 14 միլիոն, և նորոգութեանց տարեկան ծախքն է 1,800,000 լիրա սդեռլին:

Դնտրայի կազի խողովակներուն երկայնութիւնն է 1,900 մղոն, 300,000 կտուցներով, որոնք 13 միլիոն խորանարդ ոտնաչափ կազ կը սպառեն իւրաքանչիւր գիշեր:

Լնցեալ տարի 80 միլիոն Լէլլըն ջուր գործածուեր է, գրեթէ 1845⁶ գործածուած ջրոյն կրկինը: Բնակչաց կամ այցելուաց բազմութիւնը տեղէ տեղ տանելու համար 125,000 կառք կը պտըտին տասուերկու ժամուան մէջ, ասոնցմէ շատ 14,000 ալ ուրիշ կառքեր կ'անցնին ու կը դառնան. ամէն օր գաւառներէն 3000 Վակի⁶ քաղաք կը մտնեն:

Վէննիսըն ընդհանրապէս խօսելով կ'ըսէ. իւրաքանչիւր վայրկեան հոգի մը կը մեռնի. իւրաքանչիւր վայրկեան հոգի մը կը ծնանի: Դնտրա օրը 169 հոգի կը մեռնին, և իւրաքանչիւր հինգ վայրկեանին տղայ մը կը ծնանի: Հիւանդանոցներու, և տղայոց ապաւեններու մէջ 1856⁶ մեռելոց թիւն էր 19,381:

Տարուէ տարի իմամիզ գետոյն մէջ

խղդուողներուն թիւն է 500 հոգի: Տարւոյս առաջին հինգ ամիսներուն մէջ հինգ հոգի միայն մեռեր են յանբարեխառնութենէ:

Ըստ վերջին տեղեկութեանց տարուէ տարի 143,000 դատարկապորտը կ'ընդունուին առժամանակեայ և ուրիշ ապաւեններու մէջ:

Տարուէ տարի բանտարկելոց թիւն է իբր 42,000. և բոլոր բանտարկելոց տարեկան ծախքն է 170,000 լիրա սդեռլին:

Դնտրայի մէջ արուեստով մուրացիկներուն թիւն է իբր 35,000, որոնց երկու երրորդը իւլանտացի են:

Պողավաճառաց թիւն է 30,000 էրիկ մարդ, կնիկ մարդ և տղայք:

Սբիդէլֆիլտս 70,000 ոստայնանկ կան, որոնք շաբաթը 10 շիլլին կը վատրկին, 30,805 կօշկակարք, 43,928 ճօթաւ, 21,210 կին դերձակք, 1,769 խոյրարարք ու 1,277 գլխարկագործք:

Լնգղիոյ դրամասեղանին վրայ 800 աշխատաւորք կան, որոնց տարեկան վարձքն է բոլորը մէկէն 190,000 լիրա սդեռլին:

Վրամասեղանը, 1850⁶, իբր 20 միլիոն թղթադրամ ունէր շրջաբերութեան մէջ: Եւ տարին մայրաքաղաքին դրամարկղաց մէջ իբր 5 միլիոն կար'ի պահեստ: Դնտրայի անգուտ մուտքն էր 1849⁶ 11,070,176 լիրա սդեռլին:

Լպահոլութեան մուրհակներուն բոլորական արժէքն էր 166,000,000 լիրա սդեռլին, թէպէտ և տանց երկու հինգերորդը ապահովուած ըլլան: Լպահոլութեան ընկերութիւնները միշտ 10 միլիոն լիրա սդեռլին յերաշխի դրած են:

Դնտրայի ժողովուրդը տարուէ տարի կը սպառէ 277,000 եզ, 30,000 հորթ, 1,480,000 ոչխար, 34,000 խոզ, 1,600,000 քուօրդըր ցորեն, 320,464,000 լիտր գետնախնձոր, 89,672,000 կաղամբ:

Չկանց սպառումը խելքէ մտքէ վեր է. նոյնպէս ալ թռչնոց սպառումը անօրինակ է. գաւառները իբր 1,281,000 կենդանի կը խրկեն Դնտրա: Վաղ-

դիւա ու ցամաքիս մէկալ երկիրները տա-
րուէ տարի | ընտրա 70 ու 75 միլիոն
հաւկիթ կը խրկեն : | ընտրայի մէջ ու
շրջակաները իբր 13,000 կով կը պա-
հուին մայրաքաղաքին կաթ ու սեր մա-
տակարարելու համար :

| ընտրա տարուէ տարի կը սպառէ
65,000 տակառ գինի , 2 միլիոն կէլլըն
այլ և այլ ցքի , 43,200,000 կէլլըն Բր-
դը և այլ ըմպելիքներէն , ու 3,000,000
տակառաչափ ալ հանքածուխ կը վառէ :
| ր վաճառուց մէկ քառորդը իր նաւա-
հանդստէն կու գայ : | ընտրա 1853ին
կային 3,613 դարեջրոյ վաճառանոցք ,
5,279 գինետունք , և 13,000 վաճառա-
կանք գինւոյ :

| Եւ ընդարձակածաւալ քաղաքիս
ապահովութիւնը պաշտպանելու հա-
մար 6,367 ոստիկանութեան պաշտո-
նեայք կան , որոնց ծախքն է 373,000
լիրա սդեռլին . 13 ատեանք կան ոստի-
կանութեան , որոնց ծախքն է 45,050
լիրա սդեռլին . 12 բանտ քրէական յան-
ցանաց համար . 69 սպայք քաղաքին
մէջ օգնութեան հասնելու , և ուրիշ
1,600 այլ և այլ պաշտօնեայք :

| ընտրա կը հրատարակուին 35 շա-
բաթական շտեմարանք , 9 ամենօրեայ
լրագիրք , 5 երեկոյեան , 72 շաբաթա-
կանք :

| Եւ արուեստից վարժոցներէն ու
հաստատուն եկամուտ ունեցող վար-
ժարաններէն ու դպրատուններէն , ազ-
գային դպրատունները 14,000 տղայոց
ձրի կըթուլին կու տան :

ՊԱՏՄԱԿԱՆ

Քրիստոնէից առումը սկսեալ Ա . դարէն մին-
չև մեր օրերը :

Ա . դարուն՝ քրիստոնէայ ժողովրդոց թիւը կը հաշուէր միայն	500,000
Բ . դարուն . . .	2,000,000
Գ . դարուն . . .	5,000,000
Դ . դարուն . . .	10,000,000
Ե . դարուն . . .	15,000,000
Զ . դարուն . . .	20,000,000
Է . դարուն . . .	25,000,000
Ը . դարուն . . .	30,000,000
Թ . դարուն . . .	40,000,000
Ժ . դարուն . . .	50,000,000
ԺԱ . դարուն . . .	70,000,000
ԺԲ . դարուն . . .	80,000,000
ԺԳ . դարուն . . .	75,000,000
ԺԴ . դարուն . . .	80,000,000
ԺԵ . դարուն . . .	100,000,000
ԺԶ . դարուն . . .	125,000,000
ԺԷ . դարուն . . .	185,000,000
ԺԸ . դարուն . . .	250,000,000

Եւ վերջապէս ժԹ դարուն որ է
հիմակուան դարը՝ քրիստոնէից թիւը
ինչուան 260,000,000 հասած է :